ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Ապրիլի 16-ին Մայր Տաճարում Զատկի Ճրագալույցի Ս. Պատարագ մատուցվեց։

Մայր Տաճարում Ս. Պատարագին ներկա էր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Գևորգ Զ-ը։

Պատարագում էր Տ. Սահակ Ծայրագույն վարդապետ Տեր-Հովհաննիսյանը, որը հավուր պատշաճի քարոզ խոսեց։

Մայր Տաճարը լիքն էր աղոթողների հոծ բազմությամբ։

Ս. Պատարագի մատուցմանը մասնակցում էր Հոգևոր ճեմարանի երգեցիկ խումբը։

***

Ժողովրդի հոծ բազմության ներկայությամբ ապրիլի 17-ին, Տյառն Մերո Հիսուսի Քրիստոսի Հարության տոնի օրը, Մայր Տաճարում հանդիսավոր Ս. Պատարագ մատուցվեց։

Մայր Տաճարում Ս. Պատարագին ներկա էր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Գևորգ Զ-ը։

Պատարագիչն էր Տ. Կարապետ Եպիսկոպոս Թումանյանը, որը և հավուր պատշաճի քարոզ խոսեց։

Ս. Պատարագի մատուցման ժամանակ Մայր Տաճարում երգում էր Հոգևոր ճեմարանի երգեցիկ խումբը։

***

Ապրիլի 17-ին, Ս. Պատարագից հետո, Վեհափառ Հայրապետի հաճությամբ ընդունելություն-հյուրասիրություն տեղի ունեցավ, որին ներկա էին Մայր Աթոռի Միաբանության անդամները, Հոգևոր ճեմարանի ուսուցչական կազմը՝ տեսչի դիմավորությամբ և շատ հյուրեր։ Ներկաները Զատկական տոնի առթիվ իրենց շնորհավորանքները մատուցելով Վեհափառ Հայրապետին, արժանացան նորին Ս. Օծության հայրական օրհնությանը։

***

Քրիստոսի Ս. Հարության տոնի առթիվ Վեհափառ Հայրապետի անունով շնորհավորական բազմաթիվ հեռագրեր են ստացվել, որոնց թվում Տանն Կիլիկիո Շնորհազարդ Կաթողիկոս Տ. Գարեգին Ա-ից, Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ամենապատիվ Ալեքսիից, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Ամենապատիվ Կալլիստրատից, Երուսաղեմի Պատրիարք Տ. Կյուրեղ Բ-ից, Կ. Պոլսի Պատրիարքական Տեղապահ Տ. Գևորգ Արքեպիսկոպոս Արսլանյանից, ՍՍՌ Միության և արտասահմանյան թեմերի թեմական առաջնորդներից, թեմական խորհուրդներից և հավատացյալներից։

Տանն Կիլիկիո Շնորհազարդ Կաթողիկոս Գարեգին Ա-ը հեռագրում է.—

«Մեծ տոնի առթիվ շնորհավորություններով մաղթում ենք Ձեզ երկար կյանք ու առողջություն, Եկեղեցու և Հայրենիքի հաջողության համար»։

Երուսաղեմի Պատրիարք Տ. Կյուրեղ Բ-ը հեռագրում է.—

«Հոգևորականության և գաղութահայության կողմից շնորհավորում ենք Զատկի տոնը, ցանկանալով Ձերդ Վեհափառության երջանկություն ու երկար կյանք և բարգավաճում մեր Եկեղեցուն, Հայրենիքին ու սիրելի ժողովրդին»։

Կ. Պոլսի Պատրիարքական Տեղապահ Տ. Գևորգ Արքեպիսկոպոս Արսլանյանը հեռագրում է.—

«Զատկի տոնի առթիվ ընդունեցեք մեր շնորհավորություններն և ջերմ մաղթանքները»։

Հունահայ թեմի Առաջնորդ Տ. Կարապետ Արքեպիսկոպոս Մաղլոմյանը հեռագրում է.—

«Սուրբ Զատկի տոնին առթիվ պատիվ ունիմ հանձին գաղութիս որդիական շնորհավորանքներ ուղղելով Ձերդ Վեհափառությանը մաղթել երկար կյանք և բարեհաջող գործունեություն»։

Հարավային Ամերիկահայոց Կաթողիկոսական Պատվիրակ Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Խաչատրյանը հեռագրում է.—

«Ընդունեցեք Հարավային Ամերիկայի Ձեր զավակաց և մեր Զատկական շնորհավորանքները, մաղթանքները, որդիական սերն ու հավատարմությունը հանդեպ Ձեր և Մայր Աթոռ Սրբոյ Էջմիածնի»։

Եվրոպահայ թեմի Կաթողիկոսական Պատվիրակ Տ. Արտավազդ Արքեպիսկոպոս Սյուրմելյանը հեռագրում է.—

«Շնորհավորում ենք Զատկի տոնը».

Եգիպտահայ թեմի Առաջնորդ Տ. Մամբրե Արքեպիսկոպոս Սիրունյանը հեռագրում է.—

«Զատկի տոնի առթիվ Եգիպտոսի հայերի անունից շնորհավորելով մաղթում ենք Ձերդ Վեհափառությանը՝ երկար կյանք, մեր Հայրենիքին՝ բարգավաճում և մեր ժողովրդին՝ երջանկություն»։

Վրաստանի Հայոց թեմի Առաջնորդ Տ. Կարապետ Եպիսկոպոս Թումանյանը հեռագրում է.—

«Զատկի մեծ տոնի առթիվ մեր շնորհավորանքներն ենք հղում Ձերդ Վեհափառությանը և ցանկանում Ձեզ երկար կյանք և առողջություն ի փառս Հայ Եկեղեցու և Հայ Հայրենիքի»։

Ադրբեջանի և Թուրքեստանի Հայոց թեմի Առաջնորդ Տ. Սուրեն Եպիսկոպոս Թորոսյանը հեռագրում է.—

«Հոգևորականությունը, եկեղեցական խորհուրդները և հավատացյալները իրենց շնորհավորանքներն են հղում Ձեզ՝ Ս. Զատկի տոնի առթիվ, մաղթելով Ձերդ Վեհափառությանը երկար կյանք ու առողջություն ի փառս Հայ Եկեղեցու և մեր Մեծ սովետական Հայրենիքի»։

Ամերիկահայոց թեմի Առաջնորդ Տ. Տիրան Եպիսկոպոս Ներսոյանը հեռագրում է.—

«Տյառն Մերո Փրկչի հրաշափառ Հարության տոնին առթիվ ներկայացնում եմ ժողովրդյան, հոգևորական դասուն և իմ որդիական շնորհավորությունները, մաղթելով Ձերդ Ս. Օծության երկար կյանք։ Աստված անսասան պահե Եկեղեցին, Ազգը և Հայրենիքը»։

Իրանա-Հնդկաստանի թեմի Առաջնորդ Տ. Վահան Եպիսկոպոս Կոստանյանը հեռագրում է.—

«Իրանա-Հնդկաստանի հայության անունից ջերմագին շնորհավորանքներ ենք հղում աշխարհի Փրկչի Ս. Հարության տոնի առթիվ։ Աղոթում ենք Ձերդ Սրբության արևշատության համար»։

Թեհրանի թեմի Առաջնորդ Տ. Ռուբեն Եպիսկոպոս Դրամբյանը հեռագրում է.—

«Շնորհավորում եմ Ս. Հարության հրաշափառ տոնը։ Համբուրում եմ Ձեր Սուրբ Աջը, ցանկանալով արևշատություն և ամեն բարիք ի փառս Հայ Եկեղեցու»։

Բուլղարահայ թեմի Առաջնորդ Տ. Գրիգորիս Եպիսկոպոս Կարապետյանը հեռագրում է.—

«Որդիական խանդավառությամբ մատուցում եմ շնորհավորանքներս Զատկի տոնի առթիվ, Ձերդ Վեհափառության թանկագին կենաց արևշատություն և պաշտելի Սովետական Հայաստանին բարգավաճում մաղթելով սրտագին»։

Կալիֆորնիո Հայոց թեմի Առաջնորդական Տեղապահ Տ. Վարդան Եպիսկոպոս Գասպարյանը հեռագրում է.—

«Համբուրելով Ձեր Սուրբ Աջը կշնորհավորենք Զատկի տոնը»։

Ռումանահայ թեմի Առաջնորդ Վազգեն ծայրագույն վարդապետ Պալճյանը հեռագրում է.—

«Սուրբ Հարության հրաշափառ տոնին առթիվ ընդունեցեք թեմիս և իմ ջերմագին մաղթանքները. Ձերդ Վեհափառության արևշատություն և մեր ժողովրդին ու Սովետական Հայրենիքին երջանկություն ենք ցանկանում»։

Շիրակի թեմի փոխթեմակալ Գարեգին ծայրագույն վարդապետ Հակոբյանը հեռագրում է.—

«Քրիստոսի Ս. Հարության տոնի առթիվ մեր շնորհավորանքներն ենք հղում, Ձերդ Վեհափառությանը ցանկանալով երկար կյանք և առողջություն։ Համբուրում եմ Ձերդ Սրբազնության Սուրբ Աջը»։

Ատրպատականի թեմի Առաջնորդական Տեղապահ Տ. Կարապետ ավագ քահանա Մանուկյանը հեռագրում է.—

«Թեմական ժողովը, թեմական խորհուրդը, քահանայաց դասը և ժողովուրդը խո-

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՅԿԱՅԻ ՍՍՀ

նարհությամբ համբուրելով Ձեր Սուրբ Աջը, շնորհավորում են Ս. Հարության տոնը, ցանկանալով Ձեզ երկար կյանք և հարատևություն Մայր Աթոռին»։

***

Քրիստոսի Ս. Հարության տոնի առթիվ Վեհափառ Հայրապետը հաճեց շնորհավորական հեռագրեր հղել Տանն Կիլիկիո Շնորհաղարդ Կաթողիկոս Տ. Գարեգին Ա-ին, Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ամենապատիվ Ալեքսիին, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Ամենապատիվ Կալլիստրատին, Երուսաղեմի Պատրիարք Տ. Կյուրեղ Բ-ին, Կ. Պոլսի Պատրիարքական Տեղապահ Տ. Գևորգ Արքեպիսկոպոս Արսլանյանին և թեմական Առաջնորդներին ու թեմական խորհուրդներին։

***

Վեհափառ Հայրապետի հանձնարարությամբ Տ. Սահակ ծայրագույն վարդապետը, մասնակցությամբ Մայր Տաճարի դասապետներ Տ. Տ. Նիկողայոս և Խորեն ավագ քահանաների և Երևանի եկեղեցիների քահանաների, մարտի 26-ին Հսկման և հետևյալ օրը, մարտի 27-ին, Ս. Օծման հանդեսը կատարեցին Երևանի նորաբաց Ս. Զորավար եկեղեցու։

Թե եկեղեցին և թե եկեղեցու բակը լեփ լեցուն էր աղոթավորների բազմությամբ։

***

Ապրիլի 2-ին, Ս. Գրիգոր Լուսավորչի տոնի օրը, Լենինական քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցում Գերաշնորհ Տ. Կարապետ Եպիսկոպոս Թոմանյանը, մասնակցությամբ Տ. Սահակ ծայրագույն վարդապետ Տեր-Հովհաննիսյանի և Տ. Նիկողայոս ավագ քահանա Բավեյանի, ծայրագունության աստիճան շնորհեց Շիրակի թեմի Առաջնորդական Փոխանորդ Տ. Գարեգին վարդապետ Հակոբյանին։

Տ. Սահակ ծայրագույն վարդապետը Ս. Էջմիածնից բերել էր Նորին Վեհափառության Տ. Տ. Գևորգ Զ. Կաթողիկոսի սրբատառ Կոնդակը, Տ. Գարեգին ծայրագույն վարդապետին ականակուռ վարդապետական լանջախաչով պարգևատրելու մասին։

Սրբատառ Կոնդակը հանդիսավոր կերպով, խնկարկությամբ ու շարականների երգեցողությամբ, խորանից դուրս բերելով Տ. Սահակ ծայրագույն վարդապետը ընթերցեց հավատացյալների հոծ բազմության առջև։ Այնուհետև Տ. Սահակ ծայրագույն վարդապետը շնորհավորական խոսք ասելուց հետո խաչը մատուցարանի վրա դրած ներկայացրեց Գեր. Տ. Կարապետ Եպիսկոպոսին։ Սրբազանը իր ձեռքով լանջախաչը Տ. Գարեգին ծայրագույն վարդապետի լանջին կախելով շնորհավորական խոսք ուղղեց նրան։

***

Ապրիլի 2-ին, Լենինական քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցում Գերաշնորհ Տ. Կարապետ Եպիսկոպոս Թոմանյանը, մասնակցությամբ Տ. Սահակ ծայրագույն վարդապետ Տեր-Հովհաննիսյանի և Տ. Նիկողայոս ավագ քահանա Բավեյանի, տեղվույն եկեղեցու սարգավագ Նորայր Սարգսյանին քահանա ձեռնադրեց։

***

Ապրիլի 14-ին, Ավագ Հինգշաբթի օրը, Հոգևոր ճեմարանի սաները Մայր Տաճարում ս. հաղորդություն ստացան։

***

Զատկական արձակուրդներին Հոգևոր ճեմարանի սաները, ուսուցիչների ղեկավարությամբ, էքսկուրսիա կատարեցին դեպի Զվարթնոց և տեղում ծանոթացան հնագույն այդ հոյակապ հուշարձանի մնացորդների հետ։

***

Հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի մահվան 26-րդ տարեդարձի առթիվ, մարտի 23-ին Հոգևոր ճեմարանի դահլիճում կայացավ գրական-գեղարվեստական մեծ երեկո։

Երեկոյին մասնակցում էին Հոգևոր ճեմարանի դասախոսները, սաները, Ս. Էջմիածնի Միաբանության անդամները, Մայր Աթոռի աշխատակիցները։

Հոգևոր ճեմարանի վարչության հրավերով երեկոյին ներկա էին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Հր. Գրիգորյանը և նրա տեղակալ Հ. Գրիգորյանը։

Դահլիճում դրված էր մեծ բանաստեղծի մեծադիր նկարը, գեղեցիկ շրջանակի մեջ առնված, այդ նկարը շնորհալի կերպով նը-

կարել էր ճեմարանի Բ դասարանի սան Վարդան Արզանյանը։

Երեկոն բացվեց Հոգևոր ճեմարանի տեսուչ Մ. Մինասյանի ներածական խոսքով։

«Հովհաննես Թումանյանի պոեզիան» թեմայով զեկուցում կարդաց Հայ գրականություն առարկայի Հոգևոր ճեմարանի դասախոս, ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Ա. Պողոսյանը։ Զեկուցումը լսվեց լարված ուշադրությամբ։

Հարակից զեկուցումներով հանդես եկան Հոգևոր ճեմարանի Ա լսարանի սաներ Քաջիկ Գևորգյանը և Գուրգեն Մուրադյանը։ Նրանց շնորհալի, ճոխ լեզվով ու բովանդակալից զեկուցումները արժանացան ունկընդիրների ջերմ հավանությանը։

Մեծ բանաստեղծի մասին իրենց հուշերը պատմեցին Տ. Սահակ ծայրագույն վարդապետ Տեր-Հովհաննիսյանը, Գերագույն Հոգևոր խորհրդի և Վեհափառ Հայրապետի անձնական քարտուղար Հ. Ադուլյանը և ճեմարանի տեսուչ Մ. Մինասյանը։

Երեկոյի գեղարվեստական բաժնում Հ. Թումանյանի լավագույն ստեղծագործությունների արտասանությամբ հանդես եկան Հոգևոր ճեմարանի սաներ Ա. Ադամյանը, Բ. Քոչարյանը, Գ. Գրիգորյանը և ուրիշներ։

Այնուհետև կատարվեցին մենակներգներ ու խմբական երգեր հայ կոմպոզիտորների ստեղծագործություններից, ձայնագրված Հ. Թումանյանի տեքստերի հիման վրա։

Հոգևոր ճեմարանի երաժշտության դասախոս, կոմպոզիտոր Դ. Ղազարյանի ղեկավարությամբ ցուցադրվեց հայ ականավոր կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերայի 2-րդ գործողությունը։ «Անուշ» օպերայի 2-րդ գործողության բեմադրումը, ճեմարանի սաների ուժերով, կարևոր նվաճում է հանդիսանում սաների գեղարվեստական դաստիարակության տեսակետից։

Երեկոյի վերջում ելույթ ունեցավ ճեմարանի լարային նվագախումբը, որը կատարեց հայկական ու ռուսական մի շարք եղանակներ։